

ՃԱՐԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԺՈՒԹԻՒՆ

(ՈՏԱՆԱԻՈՐԷՆ ԱՐՁԱԿ, ԱՐՁԱԿԷՆ ՈՏԱՆԱԻՈՐ)

Այն օրուէնէ երբ ամուսնալուծութիւնը հեշտացաւ, Մինաս վարժապետին կնկան քիթը օրական մէկ, օրական երկու սանթիմ կը մեծնար:

Հասակը կարճ ու հաստ կը դառնար, աչքերուն փայլը տեսակ մը, երեսին գոյնը այլևս նոյնը չէր: Կարճ մարմինն մասերէն ոչ մէկը ըսկըսեց ու ուղիղ յարաբերիլ միւսին հետ: Մարդը կամեցաւ բաժանուել կնոջմէն ու գործը դատի կասաւ:

Գատարանին մէջ սակայն, «տուկանները» այլ բան ապացուցին:

Այդ տուեալները Մինասին նամակներն էին՝ գրուած կնկան՝ ամուսնութեան նախնական շրջանին, որոնց մէջ կինը կատարեալ ոտանաւոր մըն էր:

— Ծ՞ղդ է որ «բառեր չէիք գտեր» ձեր կնոջ գեղեցկութիւնը նկարագրելու 1924 Ս.պրիլի 16ին, կը հարցընէ դատաւորը Մինասին, վերցնելով մէկը այդ նամակներէն:

— Զիչդ է: Այդ թուականին այնքան բանաստեղծներ կային որ բառ չէր ճարուեր...:

Դատաւորը վերցրեց երկրորդ տուեալը:

— Շատ աղէկ: Իսկ ի՞նչպէս պատահեցաւ որ նոյն թուի Մայիսի 6ի «գիշերն իր մութը մտցաւ» ձեր կնոջ «վարսերուն» մէջ ու գնաց «անմութ»:

— Չեմ յիշեր:

— Զե՞ք յիշեր: Իսկ ըսէք խնդրեմ, ձեր կնոջ հասակը երբ և իցէ եղբ՞ր է «նոճի», հարցուց դատաւորը բարձր, ապա կ'սաձայն՝ ատենակալներուն դառնալով:

— Ի՞նչ ծառ է նոճին, ըսաւ:

— «Նոճի» մեր սասնան է կարծեմ, հրաշար բոց ունի, ըսաւ առաջին ատենակալը:

— Մինք «գարադաճ» կ'ըսենք, յարեց երկրորդ ատենակալը ու աւելցուց, ծառ բոց չունի բայց ազուրկ կրակ կուտայ:

— «Նոճին» թխկին չէ՞, հարցուց դատախազը:

— «Նոճին» ոչ կրակ ունի ոչ բոց, չհամբերելով մէջ ինկաւ յանցաւոր Մինասը, նոճին ծառ մըն է որ բացառապէս բանաստեղծութեան կարիքներին կը գործածուի:

— Ինչ և է, շարունակեց դատաւորը դառնալով Մինասին: Մայիսին ձեր կնոջ հասակը «նոճի» է եղեր: Ութի երկոյնան ան արդէն «արեւ» է որ ծագելով փարատեր է ձեր հոգիին «աղջամուղլը», թէեւ չգիտեմ թէ ինչքա՞ն յարմար բան է առ հասարակ երեկոներ արեւ ծագեցնելը:

— Բանաստեղծութեան մէջ օրուան բոլոր ժամերուն կարիլի է արեւ ծագեցնել, կը պատասխանէ յանցաւորը մասնագիտական թօնով ու կը լռէ:

— Նոյն ամսի 18ին, երբ պատասխանող Մարուսեան բերանը բացեր է երգելու՝ դուն վարչական եղանակով արգիլեր ես սոխակներուն ձայն հանել, կը շարունակէ դատաւորը: Անոր կուրծքին օր մը «չամամ» ներ ես դրել, օր մը «նուսեր», ի՞նչպէս հասկնալ:

— Այդ բոլորը բանաստեղծութեան մէջ ընդունուած բաներ են, ըսաւ դատաւորը թուղթերը ծալելով. ճի՞շդ է որ ձեր կինը 3000 ոսկի օժիտ է բերեր ու դուն ողջամբ վատներ ես:

— Ձեմ ուրանար: Բայց այդ բոլորը պատահեցաւ ինձմէ անկախ պատճառներով:

— Լաւ: Դուք հարց ունի՞ք, ըսաւ դատաւորը աջ դառնալով, դուք հարց ունի՞ք ըսաւ ան ձախ դառնալով, ու «կազմը» առանձնացաւ:

Կէս ժամէն արդիւնքը յաշտարարեցաւ: Գատարանը «անկախ» պատճառները վարժապետ Մինասին էր կախեր ու հաներ խիստ վճիռ մը:

Ըստ այդ վճաի, Մինասը պարտաւոր էր սննեակը զիջիլ կնկան, վերագարձնել իսկոյն վատնուած երեք հազարը ու ասկէ զատ հայթայթէր պիտի կնկան ամսական ապրուստը մինչեւ գործի իյնալը:

Սա վճիռ չէր, սա լախտ էր Մինասին զիջուն յանկարծակի իջուած:

Աչքերը մթնցան, դուռն ու պատուհանը ջոկել չէր կրնար, օր ամէն բան աչքին երկուք կ'երեւար: Երեք օր լ'ան ապուշ մտն հկաւ ու ելք մը կը փնտռէր, բայց չէր գտներ: Ի՞նչ ըներ, Աստուած, ի՞նչ ըներ:

Մէյ մըն ալ յանկարծ մտածեց.

— Մօ՛, եկուր նորէն փորձեմ սիրել կնկանս: Կրնամ արդեօք:

Փորձեց Մինասը ու յանկարծ կըրցաւ:

Ու սէրերու պրոցեսը վերէն վար զլորելու չափ դիւրին եղաւ:

Առաջ երբ սկսեր էր ատել կրնականը, վերջինի քիթը օրական մէկ սանթիմ միայն կ'երկարէր, միջոցոհիմա ժամէն երկու սանթիմ կը պըզտիկնար: Ու ազէկ որ չուտ միացան ամուսինները, չէ նէ պզտիկնալու այս ընթացքը եթէ շարունակուելու ըլլար, պիտի վար տեղ մը ուր, կինն այլևս քիթ... չունենար:

Բայց ի զուր: Մինաս եթէ խելօք փաստարան մը բռնէր, դատը կը շահէր: Երեք հազարը ինչու պիտի վերադարձնէր: Այսօր տպարանէն խմբագրելու անուան տակ կը վերցընեն ձեռագրերը և «ուսերը» «եւրի փոխելով, «դեռ»երը «տակալին»ի վերածելով, «բայց»երը «սակայն»ի դարձնելով, «հագին» դրամ կ'առնեն իսկ Մինասը՝ որ ինը տարի, անդու աշխատելով իր ոտանաւոր կնիկը արձակի է վերածեր և ի տրիտուր այդ բանին երեք հազար մըն է կերեր շատ բան է...: